

ՉԻՐԱԲՅՈՉԻ

(Shirabyoshi).

Ճապոնական կեանքից

Ա.

Վաղ ժամանակները ճապոնացի երիտասարդ նկարչի
դաստիարակութեան էական մասերից մէկն էր իրենց երկրի
զանազան մասերը ոտքով պտտելու անհրաժեշտութիւնը։ Այդ
ճանապարհորդութեան ժամանակ նկարչական յուշատետրի մէ-
ջըն էր անցնում իրենց գեղեցկութեամբ նշանաւոր վայրերն
ու տեսարանները, ուսումնասիրում էր բուդդայական տաճար-
ների վեհ կերտուածքն ու ճարտարապետութիւնը, որոնցից
մեծ մասը, պէտք է ասել, շինւում էր յատկապէս երկրի ամե-
նից աւելի գեղազուարճ տեղերում։ Այդ ճանապարհորդութիւն-
ների արդիւնք է այն հիւանդի տեսարաններով և առօրին կեն-
ցադի նկարչական պատկերներով հսկայական հրատարակու-
թիւնները, որ այժմ արդէն գրական անգիւտ գոհարներ են և
որ ամենից աւելի են ապացուցանում, թէ միայն ճապոնացի
նկարիչը կարող է պատկերացնել ճապոնական կեանքի արդ-
ու կարգը իւր ամբողջ գեղեցկութեամբ և ինքնուրոյն տիպա-
քով։ Ներուպացի նկարիչների փորձերը՝ նմանուել ճապոնական
նկարիչներին իրենց երկրի ու կենցաղի տեսարաններ նկարե-
լու մէջ, միշտ էլ անկհնդան և տափակ բաներ են լինում։ Նե-
րուպացի միջակ նկարիչը տալիս է մեզ միայն տեսածի իրական
պատկերը, ճապոնացին նկարի մէջ մտցնում է և իւր հոգին,
տարուայ եղանակների փոփոխութիւնների տպաւորութիւնը,
այն զգացումը, որ չարժում է իւր մէջ օրուայ այս կամ այն
ժամը, այս կամ այն վայրը, տեսարանը։ Նորա ձեռքի արդիւնքը
պատկերների և մտքերի ճոխութիւն է շնչում ու բուրում։
Ներուպացի հին ուղղութեան պատկանող, իրացի արուեստ-

գէտը, որ դեռ ևս գնհատուած է և անհատական ուղղութիւն է, — բաւականանում է իւր արուեստն արտայայտելով միայն մանրակրկիտ մանրամասնութիւններ տալով. ընդհակառակը ճապոնացին, անուշադիր է թողնում մանրամասնութիւնները, նոցա գաղափարականացում է տալիս, հեռուն պլլում է ամպերի մէջ, իւր դիրտողութիւնները հիւսում է յիշողութիւնների հետ, առնելով նոցանից միայն այն, ինչ որ ինքնուրոյն է և գեղեցիկ: Հէնց դորա մէջ էլ է նոցա ամբողջ արուեստի գաղտնիքն ու ոյժը. մի ոյժ, որ կատարելապէս գնհատել կարող է միայն նա, ով տեսել է ճապոնացի արուեստագէտներին ոգևորութիւն ներշնչող մայրենի բնութիւնն ու յարմարանքը:

* * *

Վաղուց, շատ վաղուց մի երիտասարդ ճապոնացի նկարիչ ճանապարհորդում էր Կիօտոյից՝ Իեիդօ (այժմեան Տօկիօն): Այն ժամանակները դեռ ևս ճանապարհներ շատ չկային, եղանակներն էլ մեծ մասով վատ ու անտանելի և ճանապարհորդութեան հետ կապուած էր մեծամեծ դժուարութիւններ, որին իբր ապացոյց դեռ ևս մնացել է ճապոնական ազգային առածը:—Kawai kowa tabi wo sase —Նրիտասարդ ժամանակ պիտի ճանապարհորդութիւն սովորես:

Այսօր ճանապարհները լաւացել, հաղորդակցութեան միջոցները փոխուել՝ հեշտացել են, բայց բնութեան տեսարանները մնացել են անփոփոխ. այն ժամանակ էլ նոյն էր, ինչ որ այժմ: Նոյն մայրի և տօսախի անտառները, նոյն բամբուկի պուրակները, նոյն համեստ գիւղական խրճիթները՝ իրենց գեղարուեստական յարդիւկտուններով պարարում էին ճանապարհորդի աչքն ու հայեացքը: Ինչպէս այժմ, նոյնպէս և այն ժամանակ դարաւանդներով գէպի բլուրների գազաթներն էին բարձրանում բռնձի արտերը, սրանց մէջ՝ այստեղ ու այնտեղ դեղին էին տալիս ճանահոտ տղմի մէջ վխտացող գիւղացիների յորդէ գլխարկները: Ճանապարհի երկու կողմը նոյն Յիցօ՝մանուկների պաշտպան աստծու արձաններն էին տնկուած, որոնք ժպտում էին սրբազան տաճարներն այցելող ուխտաւորներին. և այն ժամանակն էլ, ինչպէս և այժմ, ամառային շոգ օրերին կարելի էր տեսնել ծանծաղ առուների մէջ լողացող մանուկներին, որոնց ուրախ քրքիշն ու ջրի չփչոցը օդն էր թնկացնում:

Երկրորդ նկարիչը շատ էլ մանկահասակ չէր և առաջին ճանապարհորդութիւնը չէր, որ կատարում էր. արդէն սովորել էր անպաճոյճ կերակուրների և կոշտ անկողնի և գիտէր իւրաքանչիւր առարկայից առնել նորա լաւագոյն մասը: Սակայն այս անգամ նա ընկաւ մի այնպիսի տեղ, ուր շատ մեծ դժուարութեամբ պիտի կերակուր և անկողին գտնէր, որովհետեւ մարդկային բնակութեան հետք անգամ չէր երևում շրջակայքում: Արեւն արդէն մայր էր մտել և գիշերը վրայ հասել ու մութը կոխել էր: Նա աշխատեց կարճ ճանապարհ գտնել, բայց ընդհակառակն ընկաւ բլուրների անվերջ շարքերի մէջ և բոլորովին կորցրեց ճանապարհը:

Գիշերը մութ էր, լուսին չկար և եղևինների թանձր ստուերները մութն աւելի էին խտացրել: Այն տեղը, ուր որ ընկել էր նա, կարծես, բոլորովին անմարդաբնակ, վայրի ու անապատ լինէր: Չորս կողմը ձայնի չչուկ իսկ չէր լսուում: Միայն եղևինների կատարներին սուրող թեթև քամու շնչնկոցն էր լսուում, մէկ էլ միջատների մեղմ, անորոշ համբարձը: Նա աւելի ու աւելի էր առաջ անցնում, յուսալով թէ մի որևէ գետի հոսանքի կը հանդիպի, որ կառաջնորդէ իրեն մարդկային բնակութեան որևէ վայրի: Եւ ահա, վերջապէս նա պատահեց մի սրբընթաց, գիժ գետակի, որ սահում-թափւում էր, սակայն, մի խոր ձորակի մէջ: Մեր նկարիչը ստիպուած էր նորից յետ դառնալ. նա բարձրացաւ մօտաւոր բարձրութեան վրայ, որպէս զի աչք ածէ շրջակայքը և, գուցէ, բնակութեան հետք գտնէ. բայց այդտեղից էլ բացի իրար վրայ կուտակուած լեռների խաւար, անորոշ գծադրութիւններից ոչինչ չը նշմարեց:

Բ.

Հէնց այն րոպէին, երբ արդէն վճռել էր գիշերել բաց երկնքի տակ, նա հանդիպակաց լեռան ստորոտում մի դեղնորակ, անորոշ լոյս նշմարեց, որ հաւանականօրէն մարդկային բնակութիւնից էր դուրս ցուում: Առաջնորդուելով դորանով, հասաւ մի փոքրիկ տնակի, որ փայտատի խճիթի էր նմանում: Այն լոյսը, որ նա նկարել էր հեռուից, այժմ փակ դռան ճեղքից փայլւում էր: Նա առաջ անցաւ շտապով և դուռը ծեծեց:

Իրկար ժամանակ դուռը չէին բաց անում. վերջապէս, կանացի մի ձայն լսեց, որ հարցնում էր՝ թէ ով է և ի՞նչ է ու-

գում: Ձայնը խիստ բնօրյա էր, իսկ աղտաառնութիւնը մայրաքաղաքացու հնչիւն էր յիշեցնում, որ շատ զարմացրեց նորան: Սրիտասարդ նկարիչն իրեն սարերում մոլորուած ուսանող աւետանեց և խնդրեց, որ եթէ կարելի է իրեն ուտելու բան և գիշերելու տեղ տայ. իսկ եթէ այդ առիճնաւ է, ապա տեղեկութիւն տայ, գտնէ, թէ ինչպէս կարելի է հասնել մօտաւոր գիւղը: Այնուհետև մի բանի հարց ևս առաջարկուեցան տանտիրուհու կողմից, ինչպէս երևում էր այն նպատակով, որ ամեն մի կասկած փարատուէր և, վերջապէս, ասաց.

— Այս բոլորիս դուրս կը գամ. այսօր դժուար կը լինի մօտիկ գիւղ հասնելը, իսկ լեռնային շաւիղներն, այսպիսի ժամանակ, վտանգաւոր են:

Մի քանի բոլորից դուռը բացուեցաւ և ձեռքին թղթի լապտեր բռնած մի կին երևեցաւ. լապտերն այնպէս վարպետութեամբ էր բռնել, որ օտարականի դէմքն ամբողջապէս լուսաւորում էր, իսկ իրենը մթութեան մէջ էր մնում: Մի առ ժամանակ կինը լռիկ դիտում էր նորան, յետոյ հեզութեամբ ասաց. «Համբերեցէք, ջուր բերեմ»: Տաշտակը ջրով լցրեց, դրեց չէմքի առաջ և սրբիչ առաջարկեց հիւրին: Վերջինս հանեց իւր սանդալները, ոտները լուաց և ապա թէ կինը առաջնորդեց նորան մի կոկիկ, մաքուր սենեակ, որը յետեւից կցուած խոհանոցի հետ կազմում էր տանտիրուհու ամբողջ տուն ու տեղը: Յատակի վրայ փռեց բամբակէ «ցաքուտոն»ը, առաջարկեց հիւրին նստել և նորա առաջը դրեց տապակը:

Միայն այդ ժամանակ հարաւորութիւն ունեցաւ նա դիտել իւր տանտիրուհուն և վերին աստիճանի զարմացած մնաց նորա դիմագծերի նուրբ գեղեցկութեամբ: Տանտիրուհին իրենից երեք կամ չորս տարով, գուցէ, մեծ լինէր, բայց դեռ ևս իւր գեղեցկութեան ամինածաղկած հասակումն էր: Անկարելի էր ենթադրել, որ այդ կինը գեղջկուհի լինէր: Նոյն զարմանալի մեղմ, թուրիւ ձայնով շարունակեց նա.

— Սա ապրում եմ մեն-մենակ և երբէք հիւր չեմ ընդունում մօտս: Բայց ես համոզուած եմ, որ ձեզ համար շատ վրտանգաւոր կլինէր այս գիշերուայ կիսին ճանապարհ գնալը: Այստեղ, մօտակայքում, ապրում են մի քանի գիւղացի, բայց առանց ուղեցոյցի դուք երբէք չէիք կարող նոցա մօտ տանող ճանապարհը գտնել: Ուրեմն մնացէք ինձ մօտ մինչև վաղն առաւօտ: Մեծ յարմարութիւններ առաջարկել չեմ կարող ձեզ,

բայց և այնպէս, դիշերն անցնելու հնարաւորութիւն կը տամ: Անշուշտ քաղցած էք, ահա ձեզ մի քիչ shojin—ryori (բուդդայականների գործածած բուսական կերակուր) և շատ ուրախ կլինիմ, եթէ դուք իմ համեստ խորտիկ համը տեսնէք:

Ճանապարհորդը շատ քաղցած էր. ուստի և չափազանց շնորհակալ եղաւ առաջարկած հիւրասիրութեան համար: Մատաղատի աղջիկը կրակ վառեց և լուռ մի քանի տեսակ կերակուր էլ պատրաստեց,—«նա» (բողկի եփած տերևներ)՝ «բարուրածէ» (տապակած, ճապոնական լոբու—պանիր), «կամայիօ» (դդումի կտրտած, ինքնուրոյն կերպով պատրաստած կտորներ), քօքս լոբու զանգուած և մի բաժակ, ճապոնացիների սիրելի, բրինձի կերակուր—հիւրասիրութեան համեստութեան ու ոչ-ճոխութեան համար կինը խնդրում էր չդատապարտել իրեն: Մինչդեռ նա ուտում էր, տանտիրուհին ամբողջ ժամանակը լուռ նստած դիտում էր և այդ լուսթիւնը մի քիչ չփոթում էր մեր ճանապարհորդին, և որովհետև նորա բոլոր հարցերին մանկամարդ կինը պատասխանում էր կամ գլխի շարժումով կամ կարճ պատասխաններով, ուստի այլ ևս խօսակցութիւն սկսելու մտադրութիւնից հրաժարուեց բոլորովին:

Այս բոլորի հետ նորա ուշադրութիւնից չխուսափեց բռնակարանի մաքրութիւնը. ամանեղէններն էլ անպայման մաքուր էին: Սենեակի համեստ սաքը ու կարգը վայելուչ և սիրուն էր: «Փոռզումա»-ները (անկողին ու ամանեղէններ պահելու փոքրիկ պահարանի դռնակներ) ծածկուած էին չինական նրկարներով զարդարուն սպիտակ թղթով, սենեակի մէջ եղած նկարները ճապոնական արուեստի ամենայնազի տեսարաններն էին պատկերացնում, այն է դարնանալին ծաղիկներ, լեռներ ու լճակներ, ամառային անձրև, երկինք ու աստղեր, աշնանային լուսնի լուսով ողողուած մի տեսարան, քչքչացող առուակ և շատ ու շատ ուրիշ, մէկը միւսից գեղեցիկ բաներ: Սենեակի մի կողմում «բուդսուդան»-ի (պահարան) վրայ դրուած էր ընտանեկան ցածիկ պաշտամունքի-սեղան. «բուդսուդան»-ի մաքուր յղկած և լաքած դռնակները բաց էին և պահարանի մէջ երևում էր հանգուցեալների անուանական ցուցակը, մի տախտակի վրայ գրուած, որի առաջ վառուած էր կանթեղ և իբրև զոհ՝ դաշտային գեղեցիկ ծաղիկներ: Իսկ այդ ընտանեկան պաշտամունքի-սեղանի վերը կախուած էր միջակ արժանիքից տւելի գեղարուեստական մի նկար, որ ներկայացնում էր գթասրտու-

Թեան աստուածուն, ողորդած կտտարեալ լուսնի շողերով
և գլխի շուրջը ճաճանչ բռնած:

Գ.

Երբ նկարիչն աւարտեց իւր ընթերիբը, երիտասարդ աղ -
ջիկն ասաց,

— Չեմ կարող ձեզ փափուկ անկողին առաջարկել, ունե -
ցածս միայն մի բամբակէ վարագոյր է, որ գործ եմ ածում
մոծակների կծելու դէմ և մի ներքնակ, Երկուսն էլ իմս են,
բայց որովհետև այս գիշեր ես գործ շատ ունիմ, ապա հաւան -
քէն քնելու ժամանակ էլ չեմ ունենայ: Ուստի, կխնդրեմ, փո -
ռեցէ՛ք ինքներդ քնելու, թէև առաջարկած յարմարութիւններս
շատ մեծ բան չեն:

Այդ ժամանակ նկարիչը գլխի ընկաւ, որ մանկամարդ
կիւնը, թէև տարօրինակ բան էր, բայց ապրում է այդ անբնակ
վայրում մեն-մենակ և որ պատշաճ պատճառաբանութեամբ ուղղում
է իւր անկողինն առաջարկել: Ուստի սկսեց բողոքել այդպիսի
հիւրընկալութեան դէմ, որ արդէն սիրաշահութեան սահմանից
անցնում էր և հաւաստիացնում էր, որ ինքը կարող է նոյն
խսկ յատակի վրայ փառաւորապէս քնել, և որ մոծակների
խայթոցներն իրեն անհանգիստ անել չեն կարող: Բայց կիւնը՝
մեծքորոջ համոզկիւր ոճով խնդրում էր կատարել իւր առաջար -
կութիւնը: Ինքը, յիշաւի, գործ ունի և որչափ կարելի է շուտ
կը կամենար մենակ մնալ և յոյս ունի, որ իբրև բարեկիրթ
երիտասարդ թոյլ կտայ կարգադրել այնպէս, ինչպէս ինքն է
ցանկանում: Այնուհետև երիտասարդ կիւնը ներքնակը ձգեց յա -
տակի վրայ, բարձի տեղ փայտից շինած գլխատեղ դրեց, կա -
խեց մոծակներից պաշտպանուելու բամբակէ վարագոյրը և մեծ,
ծալուող ծածկարանով պատեց անկողնի չորս կողմը: Յետոյ
բարի գիշեր մաղթեց այնպիսի չեչտով, որ շատ լաւ զգացնել
էր տալիս, թէ կկամենար մենակ մնալ: Նկարիչն իսկոյն կա -
տարեց նորա ցանկութիւնը, թէև խիղճը հանգիստ չէր տալիս
իրեն, որ իւր կամքի հակառակ այդքան նեղութիւն է
տալիս իւր գեղեցկուհի հիւրընկալին: Բայց չնայելով այդ խղ -
ճի խայթոցներին, հէնց որ ոտները մեկնեց, ինքն իրեն եօթ -
նեբորդ երկնքումն պզաց: Այնպէս էր յոգնել, որ ասել չէր
կարելի ու հէնց որ գլուխը փայտէ բարձին դրեց, իսկոյն քու -
նը կոխեց աչքերը:

Կէս գիշերից բաւական անցել էր երբ խոր քնի մէջ յանկարծ զարթնեց ինչ որ տարօրինակ աղմուկից։ Այդ աղմուկը արագ և ոգևորուած շարժուող կամ պատուող մարդու ոտնաձայնի էր նմանում։ Իսկոյն նորա մտքովն անցաւ թէ՛ չլինի՞ աւազակներ են մտել տունը, իսկապէս ինքը կորցնելու ոչինչ չունէր, հետևաբար և վախենալու կարիք չկար։ Բայց նորա երկիւղն այդ սիրալիր մատաղ աղջկայ մասին էր, որի հիւրասիրութիւնն էր վայելում։ Մոծակներից պաշտպանելու բամբակէ վարագոյրի իւրաքանչիւր կողմից մի-մի որճագոյն (ծըքսի) ցանցաւոր պատուհան կար, բայց անկողնի շուրջը դրուած ծածկարանը արգելք էր լինում տեսնելու, թէ սենեակում ինչ էր կատարւում։ Սկիզբն ուզեց գոռալ, բայց յետոյ մտածեց, որ եթէ յիրաւի իրական վտանգ է սպառնում, ապա անմիտ և նոյն իսկ աննպատակ բան կը լինի ցոյց տալ, որ ինքն էլ գոյութիւն ունի այդտեղ, մինչև որ պարզուէր, թէ իսկապէս ինչ կար։ Հետաքրքրութիւն աւելի ու աւելի լարուած և պատուաստ արդէն ամեն դժբաղդութիւն կրելու, նա վճռեց, որ եթէ անհրաժեշտ լինի, նոյն իսկ իւր կեանքը կզոհէ իրեն հիւրընկալող մանկամարդ տանտիրուհու համար։ Շտապով չորերը հագաւ, առանց աղմուկի դուրս սողաց վարագոյրի տակից, մօտեցաւ ծածկարանի անկիւնին և սկսեց դիտել։ Այն ինչ որ տեսաւ, խիստ մեծ զարմանք պատճառեց նորան։

Մանկամարդ աղջիկը, փարթամ զգեստներով լզննուած, պարում էր ընտանեկան լուսաւորուած պաշտամունքի-սեղանի առաջ։ Այդ հագուստից նա իսկայն ճանաչեց, որ դա շիրաբիօշի (Shirabyoshi—պարող կին) զգեստ էր, բայց սովորական զգեստներից շատ առաւել ճոխ ու փառահեղ էր, որ ինքը երբէք չէր տեսել առհասարակ սովորական պարուհիների վրայ։ Նորա գեղեցկութիւնը, որին մի առանձին հրապոյր էր տալիս այդ ճոխ զգեստը, գիշերային այդ լուռ պահին կարծես մի գերբնական չքնաղ հմայք էր ստացել։ Բայց առաւել հմայիչ ու թովիչ էր նորա պարը։ Մի բոպէ նորա մտքովն անցաւ,— գերբնական հմայք չէր իւր տեսածը։ Ժողովրդական նախապաշարմունքներն ու սնոտիապաշտական հաւատալիքները կինաղովեսների մասին մի բոպէ յարութիւն առան նորա երևակայութեան մէջ և նորա ամբողջ մարմնով մի սարսուռ անցաւ։ Նա իրեն կախարդուած աշխարհ ընկած կարծեց, բայց բուհ-գայական զոհի սեղանը և սրբազան պատկերները իսկոյն ցրուե-

ցին նորա կասկածները և նա ամաչեց իւր երկիւղ կրելուց։ Միևնոյն ժամանակ սկսեց տանջել նորան և իւր խիղճը, — որ ծածուկ դիտում է այնպիսի մի բան, որ կամենում էին իրենից գաղտնի պահել և հասկացաւ, որ իւր առաջին պարտաւորութիւնն էր՝ հեռանալ իսկոյն իւր գաղտնի դիտարանից։ Բայց նա չէր կարողանում բաժանուել այդ տեղից։ Թովիչ պատկերը հմայել, մեխել էր նորան իւր տեղում։ Հրճուանքով ու հոգեզմայլութեամբ անկշտում դիտում էր կեանքում երբևիցէ պատահած պարուհիներից կատարելագոյնի շարժումները և որչափ յետաձգում էր հեռանալու վայրկեանն, այնքան աւելի ու աւելի էր հմայում նորան պարողի եթերային, նուրբ շարժումների կախարդական հրապոյրը։ Յանկարծ մատաղահաս տանտիրուհին դողաց, կանգ առաւ մի րոպէ, արձակեց գոտին և հանեց վրայի զգեստը, բայց նոյն րոպէին և պատահաբար շուռ եկաւ և նոցա հայեացքներն իրար հանդիպեցին...

Ներտասարդ նկարիչն, իհարկէ, հազար ու մի ներողութիւն խնդրեց, բացատրելով, թէ ինչպէս յանկարծ զարթնեց նորա ոտնաձայների դիւինից և թէ ինչպէս երկիւղ էր կրում իւր հիւրընկալի համար, որ չլինի թէ մի վնաս հասնի նորան, ի նկատի ունենալով բնակարանի բոլորովին անմարդաբնակ տեղում լինելու հանգամանքը։ Յետոյ խոստովանեց իւր հիացքն ու զարմացքը և ասաց.

— Ներեցէք իմ անտեղի հետաքրքրութիւնս, բայց ինքս ինձ չեմ կարող բացատրել այն հարցը՝ թէ դուք ո՞վ էք և ի՞նչպէս էք այսպիսի հրաշալի պարուհի դարձել։ Մայրաքաղաքի ամենանշանաւոր պարուհիների մէջ դեռ ևս չեմ պատահել մէկին, որի պարը հաւասարուէր ձեր պարին, իւր նրբութեամբ ու թովչութեամբ։ Այն րոպէից, երբ տեսայ ձեզ պարելիս, ես չեմ կարողացել մի վայրկեան իսկ աչք հեռացնել ձեզնից։

Սկզբը մատաղահաս պարուհին, ըստ երևոյթին, բարկացաւ, բայց իւր խօսքը դեռ չաւարտած, նորա դիմադժերը փոխուեցան, մեղմացան։ Ժպտադէմ նստեց նորա կողքին և ասաց.

— Ոչ, ես չեմ նեղանում ձեզնից։ Յաւում եմ միայն, որ դուք ինձ պարելիս տեսաք, այսպիսի հանգամանքներում, և վախենում եմ, որ չլինի թէ ինձ խելագարի տեղ դնէք։ Այդ պատճառով և պարտաւոր եմ բացատրել ձեզ այն, ինչ որ տեսաք։

* * *

Եւ նա պատմեց իւր կեանքի պատմութիւնը:

Մատաղ տանտիրուհու անունը երիտասարդ նկարիչը, իբրեւ նշանաւոր շիրաբիօշիի անուն դեռ ևս շատ փոքր, մանուկ հասակումն էր լսել: Նա մայրաքաղաքի սիրելին էր, բայց իւր փառքի և գեղեցկութեան զագաթնակէտին հասած ընկերները յանկարծ հեռացաւ բեմից և այնուհետեւ այլ եւ ոչ ոք նորա մասին ոչինչ չլսեց: Արհամարհեց արտաքին փայլն ու շուքը, փառքն ու հարստութիւնը, ամենքի համակրանքը և փախաւ իւր երիտասարդ սիրած մարդու հետ: Վերջինս աղքատ էր, բայց երկուստէք համաձայնութեամբ իրենց ունեցած միջոցները բաւական համարեցին գիւղում ապրելու համար: Այդ ժամանակն էր, որ նորա շինեցին լեռների գոգում տեղաւորած այդ խրճիթը և մի քանի բաղդաւոր տարի անցրին իրար հետ: Նա պաշտում էր իրեն: Նորա ամենամեծ բաւականութիւնն էր պարելիս տեսնել իրեն: Ամեն երեկոյ նա նուագում էր սիրած եղանակը, իսկ ինքը պարում էր: Բայց մի ցուրտ ձմեռային օր նա մրսեց, հիւանդացաւ և մեռաւ, չնայելով իւր ամեն քնքոյ, հոգատար խնամքներին: Այդ օրից ապրում է միայն նորա մասին ունեցած յիշողութիւններով, և ուրախութեամբ է կատարում սիրոյ ու յարգանքի այն բոլոր նուիրական յուշերը, որ կարող են յիշեցնել հանգուցեալին: Ամեն օր սովորական զոհաբերութիւնն էր կատարում այն տախտակի առաջ, որի վրայ գրուած է նորա անունը և իւրաքանչիւր գիշեր պարում է նոյն տախտակի դիմաց, որպէս զի գոնէ այդպիսով բաւականութիւն պատճառէ իւր սիրեցեալի հոգուն:

Այսպէս էր այդ գիշերային տեսարանի բացատրութիւնը:

— Իմ կողմից իսկապէս անգթութիւն էր, շարունակեց տանտիրուհին, որ զարթեցրի իմ յոգնած ու վաստակած հիւրիս. բայց ես համբերեցի մինչև այն ժամանակ, երբ կարծում էի, թէ դուք խոր քնած կլինիք և աշխատում էի պարել շատ թեթև ու հանդարտ: Ներեցէք, որ ակամայից զարթեցրի և ձեր քունը խանգարեցի:

Իւր կեանքի պատմութիւնն անել-վերջացնելուց յետոյ թէյ պատրաստեց, որը միասին էլ խմեցին. ապա այնպիսի թախանձանքով խնդրեց երթալ և նորից պառկել-քնել, որ նկարչի համար ուրիշ ճար չէր մնում, բացի հնազանդութիւնը:

Երբ երկար, խոր քնից արթնացաւ, արևն արդէն մի քա-

նի չուան բարձրացել էր երկնքի վրայ: Գնից երևելով երէկ դիչերուայ համեստ ընթրիքի պէս անսլանդոյն նախանշալ անսաւ արդէն պատրաստուած իւր համար և շնայելով, որ լաւ քաղցած էր, բայց զսպեց իրեն և քիչ կերաւ, երկիւղ կրկնով, որ չինի թէ այդպիսով իւր հիւրամեծար տանտիրուհուն բաժնից զրկէ: Եւ երբ մեկնելու ժամանակ նա կամենում էր վճարել այն բոլորի համար, ինչ որ կերել էր, ինչպէս և վայելած հոգատարութեան համար, պարուհին վերջնականապէս հրաժարուեցաւ որևէ է բան ընդունելուց:

—Նա միայն հիւրասիրութեան սրբազան պարտականութիւնս եմ կատարել, ասաց նա: Մոռացէք, խնդրեմ, այն բոլոր անյարմարութիւնները, ու դուք կրեցիք ինձ մօտ և իբր յիշողութիւն. պահպանեցէք այն բարեմաղթութիւնները, որ ես կարող եմ տալ միայն, որովհետև ուրիշ ոչինչ չունիմ ձեզ առաջարկելու իբրև յիշատակ:

Ճանապարհորդը կամենում էր դեռ ևս պնտել իւր մտադրութեան վրայ և որևէ վարձատրութիւն տալ, բայց նկատելով, որ գորանով միայն վիրաւորում է իւր չքնաղ հիւրընկալին, ձեռք քաշեց գորանից: Մնաք բարև ասաց նորան կատարեալ շնորհակալութեան խօսքերով և խորապէս դժայլուած նորա հրաշալի գեղեցկութեամբ և սիրալիրութեամբ ճանապարհ ընկաւ: Տանտիրուհին ցոյց տուեց այն նեղ շաւիղը, որով նա պիտի գնար և կանգնեց, նայեց մինչև որ չքացաւ իւր աչքից նկարիչը: Մի ժամ յետոյ երիտասարդն արդէն դուրս էր եկել իրեն ծանօթ մեծ ճանապարհը: Բայց այդտեղ մի թեթև խղճի խայթ զգաց, որ մոռացաւ յայտնել իւր անունը և մի բոպէ տատանուելուց յետոյ ինքն իրեն մտածեց. — «Միննոյն չէ: Չէ՞ որ ամբողջ կեանքիս ընթացքում միշտ էլ աղքատ պիտի մնամ»: Եւ յետոյ շարունակեց ճանապարհը:

Դ

Շատ տարիներ էր անցել այդ օրից և կամըջի տակով էլ շատ օրու գլորուել: Նրիտասարդ նկարիչն էլ ծերացել էր: Այժմ կեանքի հասունութեան օրերին, նա ականաւոր մարդ էր դարձել: Շատ ու շատ իշխաններ, ոգևորուած նորա հրաշալի գեղարուեստական գործերով, նորան հովանաւորողի պատուին

արժանանալու պայքար էին մղում: Այդպիսով նա հարուստ մարդ դարձաւ և մայրաքաղաքում իւր սեփական տունն ունէր: Հեռաւոր անկիւններից գաւառացի արեստագէտները խմբուում էին նորա շուրջը, որպէս զի նորան աշակերտեն, ապրում էին նորա տանը և աշխատում նորա դեկավարութեամբ: Ծերունի նկարչի հռչակը ամբողջ երկիրն էր բռնել:

Եւ ահա մի անգամ նորա տան դռանը մօտեցաւ մի պառաւ կին և թոյլտուութիւն խնդրեց խօսել նկարչի հետ: Մառաները պառաւի խղճուկ հագուստը և աննշան արտաքինը տեսնելով, մուրացիկի տեղ դրին և հետը բաւական կոպտութեամբ վարուեցան: Երբ կինը յայտնեց, որ իւր գործի մասին միայն «մաէստրօ»ին կարող է յայտնել, խնթի տեղ դնելով խաբեցին, թէ նկարիչը քաղաքումը չէ և յայտնի չէ թէ երբ կվերադառնայ:

Օրերն անցնում էին իրար յետեից, չաբաթները հետևում էին իրար, իսկ պառաւը միշտ էլ գալիս էր նկարչի տունը և ամեն անգամ էլ պատասխան էր ստանում, թէ— «Այսօր հիւանդ է» կամ «խիստ զբաղուած է» կամ «ժամանակ չունի» կամ «այսօր շատ հիւրեր ունի և ոչ ոքի ընդունել չի կարող» ևայլն: Բայց և այնպէս ամեն օր որոշ ժամին ճշդութեամբ գալիս էր նկարչի մօտ, ձեռքին էլ մի հնամաշ կապոց բռնած: Վերջապէս ծառաները մտածեցին, որ աւելի լաւ է իմաց տան իրենց տիրոջը:

—Ամեն օր մեր դռան առաջ գալիս կանգնոյմ է մի պառաւ, ասացին նոքա և ձեզ է հարցնում. բայց երևում է, որ աղքատ կին է: Յիսու՜ն անգամից աւելի կլինի, որ եկել է և յամառութեամբ ոչ ոքի չի ասում, թէ ի՞նչ է ուզում և անպատճառ ուզում է անձամբ ձեզ տեսնել: Մենք աշխատեցինք նորան մի կերպ հեռացնել, որովհետև մի քիչ «պակաս» է երևում, բայց միշտ էլ գալիս է ու գալիս: Ուրիշ ճար չունենալով, մնում էր միայն այս մասին ձեզ յայտնել և խնդրել ձեր կարգադրութիւնը:

Դժգոհ արուեստագէտը ասաց Նոցա:

—Ինչո՞ւ աւելի կանուխ յայտնեցիր ինձ այս մասին:

Նա շտապով դիմեց դէպի դարբասը, քաղցրութեամբ դարձաւ պառաւին և, յիշելով իւր նախկին աղքատ վիճակը, հարցրեց նորան.— Ձի՛ կարող արդեօք որևէ բանով օգնել նորան:

Սակայն պառաւ կինը դրականապէս յայտնեց, որ ինքը ոչ ուտելիքի և ոչ հագուստի կարօտութիւն չունի և որ իւր միակ ցանկութիւնն է, որ մեծ արուեստագէտը ներկարէ իւր պատկերը: Զարմացած այսպիսի ելքից, նկարիչը լեռդրեց նորա՝ ներս գալ: Նախասենեակում նա ծունկ չռեց, բաց արեց ձեռքի կապոցը և նկարչի առաջ պարզեց մի հրաշալի, ճոխ և գեղեցիկ, ոսկեկար, թէև երկար գործածութիւնից մաշուած և գոյնը արդէն նետած, մի աննման զգեստ, — նախնի ժամանակների՝ «չիրաբօշի»ի հագուստի մի չքնաղ մնացորդ:

Ե.

Մինչդեռ պառաւ կինը մէկը միւսի յետևից հանում էր իւր արդ ու զորդի պարագաները և դողդոջ ձեռքով աշխատում էր յարգարել, ծերունի նկարչի առաջ յանկարծ պատկերացաւ, կարծէք, մի վաղուցուայ, շատ վաղուցուայ՝ մոռացուած երազ՝ սկիզբն անորոշ և մութ, յետոյ միանգամից լուսաւորուեցաւ անցեալի յիշողութեան մի պայծառ շողով: Խորապէս յուզուած, կարծէք, յանկարծ տեսաւ իրապէս լեռների լանջին կաած այն միայնակ խրճիթը, որտեղ ինքն այնքան սիրալիր, անսպասելի հիւրընկալութիւն էր վայելել: Յիշեց այն կոկիկ ու սարքին սենեակը, որի մէջ քնել էր այն ժամանակ, յիշեց մոծակներից պահպանող բամբակէ վարագոյրը, զոհի սեղանի առաջ պլպլացող փոքրիկ կանթեղը և այն ծաղկափթիթ, մանկամարդ աղջկայ ինքնուրոյն գեղեցկութիւնը, որ գիշերային լուռ միայնութեան մէջ պարում է իւր սիրեցեալի համար: Եւ իշխանների սիրելին, ականաւոր նկարիչը, բոլորովին զարմացած և չկարողանալով ըացատրել այդ հանգամանքը, կուացաւ դէպի պառաւը և ասաց.

— Ներեցէք ինձ, աղաչում եմ որ մի ըրպէ անգամ մոռացայ ձեր դէմքը: Այժմ մտաբերեցի, որ մի ժամանակ ես ձեր հիւրն եմ եղել: Դուք զիջաք ինձ նոյն իսկ ձեր անկողինը, տեսայ՝ թէ ինչպէս էիք պարում դուք և այդ ժամանակ հէնց պատմեցիք ինձ ձեր կեանքի պատմութիւնը: Դուք «չիրաբօշի» էք եղել և ես չեմ մոռացել ձեր անունը:

Զարմացած և չփոթուած պառաւը սկիզբը մի բառ արտասանել անգամ չկարողացաւ. նա շատ էր պառաւել և շատ էլ թշուառութիւն էր կրել, այնպէս որ յիշողութիւնն արդէն

դաւաճանում էր իրեն: Բայց ծերունի նկարչին այնքան սրբա-
տանց էր խօսում նորա հետ, յիշեցնում էր շատ ու շատ ման-
րամասնութիւններ, ինչ որ պատմել էր իրեն և այնքան ման-
րամասն նկարագրեց այն տունը, որի մէջ ապրում էր միայնակ,
որ վերջապէս յիշողութիւնը դարձեց նորա մէջ: Ուրախութեան
արցունքն ալքերին ասաց նա.

— Ինքը գթութեան աստուածն է ուղղել իմ քայլերն այս
կողմը, լսելով մարդկանց աղօթքը: Բայց այն ժամանակ երբ
նշանաւոր «մաէստրօն» այցելեց իմ համեստ խրճիթը, եո այն
չէի, ինչ որ այժմ եմ և ինձ թւում է, որ Բուդդայի աստուծոյ
հրաշքն է, որ այժմ ճանաչում է նա ինձ:

Նա շարունակեց պատմել իւր անպաճոյճ պատմու-
թեան շարունակութիւնը: Ժամանակի ընթացքում աղքատու-
թիւնն ստիպել էր նորան ծախել իւր փոքրիկ խրճիթը և ծե-
րութեան օրերին քաղաք փոխադրուել, ուր արդէն վաղուց մո-
ռացել են իրեն և իւր անունը: Խիստ վշտացած էր իւր տնա-
կից զրկուելու համար, իսկ աւելի վշտացնում էր իրեն այն,
որ ինքն արդէն պառաւել ու ոյժից ընկել է և որ այլ ևս չի
կարողանում երեկոնները պարել «բուդդան» առաջ, որպէս
զի իւր սիրեցեալի յոգին բերկրի: Այս պատճառով և կը կա-
մենար ունենալ իւր պատկերը պարուհու զգեստով ու դիրքով,
որպէս զի «բուդդան» առաջ կախէր: Այս մասին երկմար,
շատ երկար է աղօթել գթութեան աստուածուհուն՝ Նիանոնին:
Նա նշանաւոր նկարչին գիմելու միակ պատճառն այն է, որ
սիրեցեալի համար կը ցանկար ունենալ ոչ սովորական պատ-
կերներից մէկը, այլ մեծ նկարչի ձեռքի ու վրձինի արժանի
գործ: և ահա իւր հետ բերել է նաև իւր զգեստը, յուսալով,
որ մաէստրօն կնկարէ իրեն հէնց այդ զգեստով:

Խորապէս յուզուած, ծերունի նկարչը սիրալիր ժպտով
լսում էր նորան և վերջն ասաց.

— Ինձ համար մեծ բաւականութիւն է նկարել ձեր պատ-
կերն այնպէս, ինչպէս դուք էք ցանկանում: Այսօր պէտք է
մի անյետաձգելի գործ աւարտեմ. բայց եթէ դուք վաղը գաք,
ես ամեն ջանք գործ կը դնեմ նկարելու ձեզ այնպէս ու այն
գիրքով, ինչպէս դուք կկամենաք:

Բայց պառաւ կինը խոնարհ յարգանքով պատասխանեց.

— Սա կկամենայի մաէստրօյին մի բան էլ ասել, որ ամե-
նից աւելի է ճնշւում սիրտս: Այն մեծ շնորհի համար, որ ես

ստանում եմ ձեզնից, ուրիշ ոչինչ չեմ կարող առաջարկել ձեզ, բացի նոյն այս զգեստից. բայց այս էլ պիտի ասեմ, որ եթէ իւր ժամանակին շատ թանգագին են եղել այդոնք, սակայն այժմ, իսկապէս, ոչինչ չարժեն. բայց և այնպէս, յոյս ունիմ, որ մաէսորօն կվերցնի, որովհետեւ այժմ արդէն հազուադէպ իրեր են դարձել, ինչու որ այժմ այլ ևս «չիրարիօշի» չկայ, իսկ «մայկօ»ն (ժամանակակից սլարուհի) այդպէս չէ հագնւում այժմ:

—Օ՛, այդպիսի բաներ մի ասէք ինձ խնդրեմ, բացականչեց արուեստագէտը:—Այնքան բաղդաւոր եմ զգում ինձ, որ վերջապէս առիթ ունեցայ, գոնէ մասամբ ուղղելու իմ յանցանքը, որ ասել չեմ կարող: Նւ այսպէս վաղը կնկարեմ ձեր պատկերը, ինչպէս կկամենաք:

Պառաւը երեք անգամ մինչև գետին խոնարհեց և շնորհակալութիւն յայտնելով, շարունակեց.

—Ներեցէք, տէր իմ, մի բան էլ ունիմ ծանրացած սըրտիս վրայ, այն էլ կը կամենայի ասած լինել: Կը ցանկայի, որ դուք ինձ պատկերացնէիք ոչ այնպէս, ինչպէս այժմ եմ, այլ այնպէս, ինչպէս մի ժամանակ տեսել էք ինձ:

—Ամենայն ուրախութեամբ, պատասխանեց նկարիչը, և ես շատ լաւ եմ յիշում, թէ որչափ չքնաղ էիք այն ժամանակ:

Նորա կնճիռներով ծածկուած, թորչոմած գէմքը ուրախութեամբ փայլեց, երբ լսեց այս խօսքերը. յետոյ բացականչեց այնպիսի ձայնով, որ կարծէք, սրտից մի ծանր քար ընկաւ.

—Նւ այսպէս, ինչ որ յոյս էի տածում, ինչի համար որ աղօթում էի, կատարւում է ցանկացածիս համաձայն: Եւ որովհետեւ դուք շատ լաւ էք յիշում թէ ինչպէս էի երիտասարդութեան օրերիս, ուստի աղաչում եմ, նկարեցէք ինձ ճիշտ այնպէս, ինչպէս էի այն ժամանակ, ինչպէս յիշում էք: Ահ, մեծ վարպետ, նորից՝ մէկ էլ երիտասարդացրէք ինձ: Նորից գեղեցիկ, չքնաղ դարձրէք ինձ, որպէս զի սիրեցեալիս հօգին ուրախացնել կարողանամ: Նա կը դիտի ձեր ձեռքի արտագրութիւնը և կնեւէ ինձ, որ այլ ևս ոյժ չունիմ պարելու իւր համար:

Կրկին ու կրկին նկարիչը հանգստացրեց նորան և ասաց.

—Եկէք վաղն անպատճառ և ձեր պատկերը կնկարեմ ճիշտ այնպէս, ինչպէս մի ժամանակ տեսել եմ, ինչպէս ձեր հմայիչ գեղեցկութեան օրերին էիք,—կը նկարեմ մի երիտա-

սարդ, չքնաղ, դգլխիչ շիրաբիօշի: Բոլորովին ապահով ու հանգիստ եղէք և վաղն եկէք:

Զ.

Հետեւեալ օրը եկաւ պառաւ պարուհին և ծերունի տունաստագէտը նկարեց նորա պատկերը սպիտակ մետաքսի կրտորի վրայ, բայց ոչ այն դիմագծերով, որ տեսնում էին նորա աշակերտներն, այլ այն պատկերով, որ թելադրում էր իրեն երիտասարդութեան յիշողութիւնը. — թռչնակի աչքերի պէս փայլուն աչքերով, բամբուկի պէս նուրբ ու ճապակ իրանով. նկարածը, կարծես, բուդդայական մի հրեշտակ լինէր, հագցրած մետաքս ու ոսկեթել զգեստներ: Մեծ վարպետի հմուտ վրձինի տակից վերածնում էր շնորհքն իւր բոլոր հրապոյրով, նորից ծաղկում էր թառամած գեղեցկութիւնը: Երբ պատկերը նկարուած, վերջացած և նկարչի անունն էլ ստորագրած էր, նա մի ուրիշ մետաքսի կտորի վրայ անցրեց-պրկեց երկու կողքից կախեց ծայրերը փողոսի շուրջ քանդակներով զարդարուն եղենափայտէ գլանակներ: Այնուհետեւ նկարը կտոր—փաթածելով, արուեստագէտը դրեց սպիտակ փայտից շինած մի փոքր արկղի մէջ և յանձնեց շիրաբիօշիին: Կամեցաւ իբրեւ յիշատակ նաև ոսկի ընծայել, բայց չկարողացաւ համոզել ընդունել այդ բանը:

—Ո՛հ, ասաց նա, ճշմարիտն եմ ասում, ոչնչի կարօտութիւն չեմ քաշում և ցանկութիւնս էր միայն պատկերս ունենալ: Այդ էր միայն աղօթքս աստուածներին, այժմ երբ աղօթքներս տեղ հասան և ցանկութիւնս կատարուած է, այլ ևս աշխարհս վրայ ոչինչ չեմ ուզում և համարձակ կարող եմ Բուդդայի կոչին հետեւել: Մի միտք միայն տանջում է ինձ, որ ոչինչ չեմ կարող առաջարկել ձեզ, բացի այս զգեստից, որ կխնդրէի և կաղերսէի ձեզ ընդունել, թէև ոչ մի դին չունի այլ ևս: Ամեն օր կաղօթեմ ձեզ համար, որ ձեր կիանքի մնացած օրերը բախտաւոր անցնեն,—ահա այն շնորհակալութիւնը, որ ես՝ խեղճ պառաւս մատուցանել կարող եմ ձեր արտակարգ շնորհի և գթասրտութեան համար:

—Ինչ որ արել եմ ձեզ համար, ասաց նկարիչը, այդ մասին խօսել անգամ չարժէ. իսկ առաջարկած զգեստը ուրախութեամբ կվերցնեմ, եթէ միայն դա ձեզ բաւականութիւն պատճառել կարող է: Դա կյիշեցնէ ինձ միշտ ձեր խրճիթում անց-

րած գիշերս, երբ դուք իմ պատճառով հրաժարուեցաք ամեն յարմարութիւնից և ինձ ձեր պարտականը դարձրիք, որչափ կեանք կունենամ: Իսկ այժմ պատմեցէք ինձ, խնդրեմ, որտեղ էք ապրում, որպէս զի կարողանամ գալ և տեսնել նկարն իրեն յատկացրած տեղում:

Բայց պառաւ կինը հրաժարուեց ասելու նորան թէ որտեղ է ապրում, որովհետև իւր խրճիթն այնպիսի նշանաւոր մարդ ընդունելու համար չափազանց խղճուկ է և կրկին անգամ խոնարհ գլուխ տալով, ուրախութեան արցունքն աչքերին տուն շտապեց իւր անգին դանձով:

Այն ժամանակ նկարիչը կանչեց իւր աշակերտներէց մէկին և ասաց.

—Շուտով գնացէք պառաւ կնոջ յետեւից, բայց այնպէս, որ նա չնկատէ և տեղեկացէք, թէ որտեղ է ապրում:

Եւ երիտասարդը աննկատ հետեւեց նորան, Երկար ժամանակ չկար գնացողը վերջապէս, երբ վերադարձաւ, նորա շփոթուած դիմագծերը պարզ ասում էին, որ ուրախ լուրեր չի բերել:

—Ես հետեւցի պառաւին, ասաց նա, անցանք ամբողջ քաղաքը, հասանք մինչև չորացած գետի հունը, մինչև այն տեղը, որտեղ մահապարտներին են գլխատում: Այստեղ տեսայ մի խղճուկ խրճիթ, այն խրճիթների նման, որի մէջ ապրում են ճշտանները (Ճապոնիայի աւատական իշխանութեան ժամանակ պարիսնների դասակարգ, որոնք իրաւունք չունէին մարդկային բնակութեան մօտ ապրելու). ահա այդ խրճիթն էլ մըտաւ պառաւ կինը: Դա մի անմարդաբնակ և կեղտի մէջ կորած տեղ է, վարպետ:

—Բայց և այնպէս, — ասաց նկարիչը. — վաղը կառաջնորդէք ինձ այդ անմարդաբնակ, կեղտոտ տեղը: Քանի ես կենդանի եմ, պառաւը ոչ մի զրկանք չպիտի քաչէ և ոչ մի հոգս պիտի չունենայ, — ոչ հագուստի, ոչ կերակրի և ոչ մի բանի:

Եւ երբ աշակերտները իրենց զարմանքն էին յայտնում լսածի մասին, նա պատմեց ճշիրաբէօշիի պատմութիւնը և իւր ասածն այլ ևս օտարօտի չէր թւում ոչ ոքի:

Է

Միւս օրը, արևծագից մի ժամ յետոյ, վարպետն ու ա-

շակերտը դիմեցին դէպի քաղաքի ծայրը, չորացած գետի հու-
նը, որտեղ ճետաձներն էին ապրում:

Խղճուկ, միայնակ խրճիթի դուռը փակ դռան, իսկ նը-
կարչի թխթխոցին ոչ ոք պատասխան չտուեց ներսից: Նկա-
տելով, որ ներսից սողնակը դրած չէ, նա կամացուկ դուռը բաց
արեց և ներս մտնել թոյլտուութիւն խնդրեց: Դարձեալ ոչ մի
պատասխան չստանալով, նա ներս մտաւ առանց թոյլտու-
թեան: Ակամայից մի նոր թափով զարթնեց նորա մէջ անցեա-
լի յուշերը, ինչպէս նա յոգնած ու ուժասպառ, մի մութ գիշեր
լեռների գրկում տեղաւորուած խրճիթի առաջ կանգնած առ-
պնջականութիւն էր խնդրում:

Յուշիկ քայլերով ներս մտնելով, տեսաւ պառաւին փա-
թթուած մի հին, գլգլուած ու բարակ վերմակի մէջ կարծես
քնած էր: Անտաշ դարակի վրայ նորա աչքին ընկաւ ընտանե-
կան զոհաբերութեան սեղանը փոքրիկ անուանական տախտա-
կով, ճիշտ այնպէս, ինչպէս 40 տարի առաջ: Այժմ էլ, ինչպէս
և այն ժամանակ, սեղանի առաջ պլպլում էր փոքրիկ կանթե-
ղը: Դթութեան աստուածունու լուսնի լուսով ողողուած պատ-
կերն այլ ևս չկար. նորա տեղ դրուած էր մեծ-վարպետի փա-
ռաւոր ընծան, իսկ նորա տակ Hito-Koto-Kwannon մեծ-աս-
տուածունուն նուիրած աղօթքը, որին մի անգամ միայն կա-
րելի էր աղօթել ամբողջ կեանքի ընթացքում, որովհետև միան-
գամ էր միայն կատարում մարդու խնդիրը: Սենեակի մէջ ե-
ղած մնացած սարգ ու կարգը վերին աստիճանի խղճուկ էր,
մի անկիւնում միայն ընկած էր կանացի ուխտադնացութեան
հանդերձ, մի գաւազան և մի ջրի թաս:

Բայց նկարիչը չկամեցաւ իւր ուշադրութիւնը կենդո-
նացնել այդ իրերի վրայ, կամենում էր զարթեցնել քնածին,
ուստի և հանդարտ ձայնով մի քանի անգամ կանչեց նորան,
անուէր տալով:

Միայն այդ ժամանակ նա գլխի ընկաւ, որ պառաւ պա-
րուհին մեռել էր և զարմանքի ու հիացմունքի խառն զգացու-
մով դիտում էր, կարծես, նորա երիտասարդացած դէմքը:
Մի աննկարագրելի հանգիստ էր արտացոլած նորա դիմադծե-
րի վրայ, կարծէք, երիտասարդութեան ցոլքն էր լուսաւորում
նորա երեսը: Թշուառութեան կնճիռները, մի առաւել կարող
Անտես վարպետի ձեռքով նկարչի վրձինից աւելի մեղմել ու
յարգարել էր և աւելի գեղեցկութիւն պարգևել:

ՄԵՆԻԻԲ